ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ COVID -19 ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԵՂԾՎՈՂ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ»» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում, շարունակվում է կորոնավիրուսային համավարակի դեպքերի ալիքաձև աճը: Հիվանդությանը դիմակայելու, արագ արձագանքելու և հիվանդներին պատշաճ բժշկական օգնություն տրամադրելու համար անհրաժեշտ է ունենալ պատրաստված առողջապահական համակարգ, այն է՝ վարակի տարածումը կանխելու համար պահանջվող անհատական պաշտպանիչ միջոցներ, հիվանդության վարման և արդյունավետ բուժման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումներ, բոլոր օղակներում համապատասխան վերապատրաստումներ անցած բժշկական անձնակազմ, ինչպես նաև ինֆեկցիոն հիվանդությունների համար նախատեսված սանիտարական նորմատիվների պահպանմամբ կառուցված/վերակառուցված կանխարգելիչ, ախտորոշիչ և/կամ բուժական ֆունկցիաներ իրականացնող բժշկական հաստատությունների շինություններ:

Նշված բոլոր ուղղություններով վերջին 30 տարվա ընթացքում ձեռնարկվել են բազմաթիվ միջոցառումներ, իսկ 2020թ., համավարակի տարածմանը զուգահեռ, երկրում կենտրոնացվեցին բոլոր հնարավոր ռեսուրսները՝ առողջապահական համակարգը անհրաժեշտ միջոցներով ապահովելու և նետված մարտահրավերին դիմակայելու համար:

Համակարգի զինման և բարեփոխման աշխատանքները շարունակվում եմ մինչ այսօր և կրում են շարունակական բնույթ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ համավարակը դեռևս ունի լայն տարածում, հիվանդների թիվը պարբերաբար աճում է, իսկ հիվանդությունը շարունակում է ունենալ մահացու ելք:

Այսպիսով, կապված Հայաստանի Հանրապետությունում COVID-19-ին համավարակին հնարավորինս արագ և արդյունավետ հակազդելու անհրաժեշտությամբ՝ առաջարկվում է ստորագրել Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվող «Հայաստանի Հանրապետությունում COVID-19 համաճարակային

պատրաստվածության մակարդակի բարձրացում. կորոնավիրուսի կողմից ստեղծվող սպառնալիքի հայտնաբերում և արձագանքում» դրամաշնորհային Համաձայնագիրը:

Նշված Համաձայնագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Ծրագիր, որը կնպաստի COVID-19-ի բռնկման ռազմավարական պատրաստվածության և հակազդման գործընթացին, առողջապահական համակարգի, մասնավորապես՝ կորոնավիրուսի հայտնաբերման և ախտորոշման, ինչպես նաև ինտենսիվ թերապիայի ծառայությունների կարողությունների հզորացմանը՝ հիմնական բժշկական սարքավորումների, պարագաների և ախտորոշման ու բուժման համար անհրաժեշտ միջոցների, բուժաշխատողների պաշտպանվածության կազմակերպման, հասարակության իրազեկման, վիրուսով պացիենտների տրիաժի և կառավարման, վարակի հսկողության ուղեցույցների վերաբերյալ բուժաշխատողների վերապատրաստման միջոցով:

Կապված COVID-19 գլոբալ համաճարակի հետ՝ Ծրագրի նպատակն է բժշկական ծառայությունների տրամադրման շարունակականության, ինչպես նաև հիվանդության տարածման սպառնալիքին արագ հակադարձելու կարողության ապահովումը՝ (կորոնավիրուսով հիվանդների ժամանակին թեստավորում և բուժում), հաշվի առնելով նաև կորոնավիրուսի հնարավոր ալիքային ընթացքը և սեզոնային սրացումները:

Ծրագրով նախատեսված 3 բաղադրիչների շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Վարակի կանխարգելման և վերահսկման արդյունավետության բարձրացում, մասնավորապես՝ ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերի Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի (ՀՎԿԱԿ) մասնաճյուղերի արդիականացում (վերակառուցման աշխատանքների իրականացում, ներառյալ նախագծանախահաշվային աշխատանքներ, հեղինակային և տեխնիկական վերահսկողություն, լաբորատոր սարքերով վերազինում, պրոտոկոլներով առաջարկվող հատուկ պաշտպանիչ միջոցների և նյութերի ձեռքբերում):

Հարկ է նշել, որ ՀՎԿԱԿ-ի մարզային տասը մասնաճյուղից հինգը (Շիրակ, Լոռի, Սյունիք, Գեղարքունիք, Տավուշ) արդեն իսկ վերակառուցվել/կառուցվել և հագեցվել են լաբորատոր սարքավորումներով:

Ուստի, **ՀՎԿԱԿ-ի Արարատի մարզային մասնաճյուղն** ընտրվել է այն հիմքով, որ Հայաստանի հարավում Սյունիքի մասնաճյուղը արդեն իսկ արդիականացվել է, արդիականացված Արարատի մասնաճյուղի հետ միասին այս երկու մասնաճյուղերը կապահովեն հիվանդությունների վերահսկման և կանխարգելման լաբորատոր աշխատանքները նաև ՀՀ Վայոց ձորի մարզում: Միևնույն ժամանակ, Արարատի մարզը սահմանամերձ է (ներկայում՝ նաև Վայոց ձորը), և այս տարածաշրջանում լաբորատոր կարողությունների զարգացումը խիստ անհրաժեշտություն է:

Արմավիրի մարզային մասնաճյուղն ընտրելու համար հիմք է հանդիսացել այն հեռանկարը, համաձայն որի մասնաճյուղի արդիականացումը հնարավորություն կտա ապահովել հիվանդությունների վերահսկման և կանխարգելման լաբորատոր աշխատանքները նաև ՀՀ Արագածոտնի մարզում: Հարկ է նշել, որ Արմավիրի մարզը Հայաստանում ամենախիտ բնակեցվածներից մեկն է և համարվում է սահմանային գոտի, որի պատճառով այս տարածաշրջանում լաբորատոր կարողությունների զարգացումը խիստ կարևորվում է:

Այսպիսով, վերակառուցման և հագեցման համար առաջարկված ՀՎԿԱԿ երկու տարածաշրջանային մասնաճյուղերը, վերոնշյալ արդեն իսկ արդիականացված գործող հաստատությունների հետ միասին, կծածկեն Հայաստանում հիվանդությունների վերահսկման և կանխարգելման աշխատանքներն իրականացնելու բոլոր կարիքները:

2. Վարակիչ հիվանդությունների դեպքերի վարման համակարգի հզորացում, մասնավորապես՝ ՀՀ Լոռու մարզում ինֆեկցիոն հիվանդությունների ծառայության ենթակառուցվածքի բարելավում. Վանաձորում ինֆեկցիոն ծառայությունների համար նախատեսված շենքային պայմանների բարելավում՝ նոր մասնաշենքի կառուցում՝ 30 մահճակալի համար, ընդլայնվելու հնարավորությամբ, Վանաձորի ինֆեկցիոն ծառայության վերազինում, այդ թվում հատուկ բժշկական սարքավորումների, կահույքի և պարագաների ձեռքբերում լաբորատորիայի և ինտենսիվ թերապիայի ծառայության համար, COVID-19-ով հիվանդների վարման վերաբերյալ բժշկական անձնակազմի վերապատրաստման դասընթացների կազմակերպում (առաջարկվում է ԱՀԿ-ի ընթացակարգերով):

ՀՀ Լոռու մարզում ինֆեկցիոն ծառայության ենթակառուցվածքի բարելավումը համավարակի պայմաններում խիստ անհրաժեշտ է: Մարզկենտրոնի առկա ինֆեկցիոն հիվանդանոցի շենքային պայմանները (կառուցված է 70-ական թթ..) և սարքավորումներով հագեցվածությունը գտնվում են ոչ բարվոք վիճակում, բացակայում է ինտենսիվ թերապիայի ծառայությունը: Առաջարկվող նախագծով ծառայությունը կտեղակայվի նորակառույց բազմաֆունկցիոնալ երրորդային մակարդակի Վանաձորի ԲԿ տարածքում: Նորաստեղծ կենտրոնում նախատեսվում է նաև ինտենսիվ թերապիայի ծառայության ստեղծում: Արդյունքում, մարզի բնակչությանը հնարավորություն կընձեռվի տրամադրել ամբողջական և որակյալ բժշկական ծառայություններ մեկ վայրում:

3. Հանրային իրազեկության բարձրացում, մասնավորապես՝ հանրային իրազեկման ռազմավարության մշակում, տեղեկատվական բազմազան հարթակների օգտագործում հանրային իրազեկման նպատակով:

Նշված Ծրագրի իրականացման նպատակով որպես դրամաշնորհ առաջարկվում է հատկացնել 3.0 մլն ԱՄՆ դոլար գումար:

Այսպիսով, Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի կողմից տրամադրվող դրամաշնորհը կնպաստի Հայաստանում COVID-19-ի դեմ պայքարի շրջանակներում տարվող աշխատանքների ամբողջականացմանը, մատուցվող կանխարգելիչ, ախտորոշիչ և ինֆեկցիոն ծառայությունների բարելավմանը ՀՀ երկու մարզերում ՀՎԿԱԿ ենթակառուցվածքների արդիականացման, ՀՀ Լոռու մարզի ինֆեկցիոն ծառայության հզորացման, բժշկական անձնակազմի կրթման և բնակչության շրջանում իրազեկվածության բարձրացման միջոցով:

Ուստի, «Հայաստանի Հանրապետությունում COVID -19 համաճարակային պատրաստվածության մակարդակի բարձրացում. կորոնավիրուսի կողմից ստեղծվող սպառնալիքի հայտնաբերում և արձագանքում» դրամաշնորհային Համաձայնագրի ստորագրումը համարվում է նպատակահարմար: